Պաշտոնական օրինակը անգլերենն է

Հետընտրական հայտարարություն

ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի ընտրությունների դիտորդական առաքելությունը
Հայաստանի նախագահական ընտրություններին
2013 թվականի փետրվարի 18

Ընդհանուր առմամբ Հայաստանի փետրվարի 18-ի ընտրությունները բարելավվել են՝ նախորդ նախագահական ընտրությունների համեմատ: Ընտրություններն անցան խաղաղ և բարելավված իրավական շրջանակի ներքո, լավ էին կազմակերպված: Հավաքների և արտահայտվելու ազատություններն ընդհանուր առմամբ հարգվում էին, և լրատվամիջոցները հավասարաչափ ժամանակ էին տրամադրում: Սակայն թեկնածուների ուժային սահմանափակ ներկայացվածությունը ենթադրում էր, որ ընտրությունները զուրկ էին իրական մրցակցությունից: Առաջադրված թեկնածուները ազատ միջավայրում քարոզարշավ ծավալելու և ընտրողներին իրենց տեսակետները ներկայացնելու հնարավորություն ունեին, սակայն քարոզարշավը չկարողացավ հանրության մոտ հետաքրքրություն առաջանցել:

Այն փաստը, որ մի քանի ազդեցիկ քաղաքական ուժեր որոշեցին այս ընտրություններին թեկնածու չառաջադրել, կարծես ընտրողների մոտ հակակրանք և վստահության բացակայություն է առաջացրել: Ի հավելումն, ընտրական քարոզարշավները հաճախ ամուր քաղաքական հարթակների վրա չէին հիմնված, քանի որ շատերը կենտրոնանում էին անհատների և ընտրական վարքի վրա: Ուստի, ընտրողներին իսկապես տարբեր քաղաքական կարծիքների սահմանափակ ընտրություն էր տրված:

Մյուս կողմից, դիտորդները սոցիալական ցանցերում քաղաքական բանավեճերին քաղաքացիների ներգրավվածության աճ են արձանագրել: Սա կարծես նոր և աճող երևույթ է, որը շահագրգիռ անձիք կարող են հետագայում օգտագործել: Որոշ շահագրգիռ անձիք վիճարկում էին, որ 8 միլիոն (մոտ 15,000 եվրո) ՀՀ դրամ թեկնածուների գրանցման վճարը շատ է, և որ հավանական թեկնածուներից միակ կինը չի կարողացել բավարարել այս նախապայմանը:

Առկա էին շարունակական տեղեկություններ, մասնավորապես տեղական մակարդակով, որ հստակ չէր գործող նախագահի քարոզչական ակտիվիստների և պետական կառույցների տարանջատումը: Սա ներառում էր վարչական ռեսուրսների սխալ օգտագործումն ու ճնշումը հանրային աշխատողների վրա, որպեսզի նրանք մասնակցեն ընտրություններին և քարոզչական միջոցառումներին: Մինչև նման դեպքերը չվերացվեն, թեկնածուների միջև հավասար պայմաններ չեն լինի, և Հայաստանը կշարունակի խախտել 1990 թվականի Կոպենհագենյան փաստաթղթով իր վրա դրված պարտավորությունները:

Իշխանությունները շարունակաբար հայտարարում էին ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու իրենց ցանկության մասին՝ համաձայն ԵԱՀԿ պարտավորություններին: Գլխավոր դատախազությունը ակտիվորեն խրախուսում էր քաղաքացիներին՝ տեղեկացնել ձայներ գնելու կամ այլ խախտումների դեպքերի մասին, և երաշխավորում էր, որ այդ տեղեկությունները տեղեկացնողի համար բացասական հետևանքների չեն հանգեցնի: Ցավոք, ձայներ գնելու դեպքերի ենթադրություններն առկա են՝ նվազեցնելով ընտրողների վստահությունը:

Չնայած ոստիկաններն էական ջանքեր են թափել՝ ընտրողների ցուցակները բարելավելու համար, շարունակվում են բազում ահազանգեր ստացվել անճշտությունների վերաբերյալ: Շատ շահառուներ, ներառյալ թեկնածուներն ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, նշեցին կեղծիքի և անճշտությունների չարաշահման հավանականությունը: Սա վաղուցվա խնդիր է Հայաստանում և նպատակասլաց քաղաքական կամք կպահանջվի՝ այն լուծելու համար: Սա առաջին նախագահական ընտրությունն էր՝ նոր Ընտրական օրենսգրքի ընդունումից հետո, որն ընդհանուր առմամբ լավ շրջանակ է ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար: Այդուհանդերձ, բանտարկյալների, անկախ հանցանքի մեծությունից, քաղաքացիական իրավունքներից զրկելը դեմ է

համընդհանուր ընտրության իրավունք ապահովելու Հայաստանի միջազգային պարտավորությանը: Բարելավված ընտրական օրենսդրությունը կարևոր առաջխաղացում է, սակայն բոլոր շահառուների կողմից օրենքի արդար և պատշաճ իրականացումը նույնքան կարևոր է, որքան ինքնին օրենքը:
Քարոզարշավի ֆինանսավորման թափանցիկությունը կարևոր է արդարության և կառավարության հանդեպ հանրային վստահության համար: Նոր Ընտրական օրենսգիրքը խստացրել է ֆինանսակա կանոնները և պահանջում է զեկուցել քարոզարշավի հետ կապված ծառայությունների, ակտիվների և արդյունքների մասին: Այդուհանդերձ, այն փաստը, որ շտաբերից չէր պահանջվում ծախսերի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել, և ԿԸՀ-ի այն եզրակացությունը, որ քարոզարշավի նպատակային բանկային հաշիվներ բացելը պարտադիր չէ, կասկածի տակ է դնում թափանցիկության այդ սկզբունքը:
Թեկնածուների գրանցումը բազմակողմանի էր, և թեկնածուները իրենց քարոզարշավի առումով չեն արձանագրել և ոչ մի խոչընդոտ. Այս ազատությունը Հայաստանի համար մեծ առաջընթաց է: Մահափորձի փորձը թեկնածուներից մեկի նկատմամբ լուրջ անհանգստություն է առաջացնում, սակայն համարվում է եզակի դեպք, որը չի ազդել ընդհանուր քարոզարշավի վրա:
Լրատվական ծածկույթը հնարավորություն տվեց ընտրողներին տեղեկություններ ստանալու քարոզարշավների վերաբերյալ. Հեռուստատեսությունը հիմնականում տրամադրել է հավասարակշռված ժամանակ նախագահական թեկնածուներին, ցույց տալով նրանց քարոզարշավի մակարդակը: Հանրային հեռարձակողները անվճար ժամանակ էին տրամադրում բոլոր թեկնածուներին օրենքին համաձայն, և մասնավոր լրատվամիջոցները նույնպես հնարավորություն էին տալիս թեկնածուներին արտահայտելու իրենց կարծիքները և որակավորումները: Այնուհանդերձ, թեկնածուների միջև քննարկումների և քննադատող լրատվության պակասը սահմանափակեց ընտրողների կարողությունները համեմատելու և հակադրելու քաղաքական հարթակները:
Ընտրության օրը ընտրական գործընթացը լավ էր կազմակերպված, ընտրական տեղամասներից շատերում առկա էին դիտորդներ: Այնուամենայնիվ, լցոնումը արձանագրվեցին կազմակերպչական խնդիրներ, ինչպես օրինակ լցոնման մեկ դեպք: Ինչպես 2012 թվականի պառլամենտական ընտրությունների ժամանակ, անձնագրերում տպված թանաքով նշումները չկարողացան ապահովել անհրաժեշտ պաշտպանություն նրանից, որ միևնույն անձը մի քանի անգամ չմասնակցի ընտրությանը, քանի որ թանաքը կարող էր հեշտությամբ մաքրվել: Քվեաթերթիկների հաշվարկը հիմնականում գնահատվում է դրական, չնայած գրանցվեցին ընթացակարգային խնդիրներ և չհամընկնող տվյալների առանձին դեպքեր: Շատ դիտորդներ նշեցին տեղական դիտորդների և ընտրատեղամասերում նախագահական թեկնածուներին ներկայացնող վստահված անձանց մասնակցության ցածր մակարդակ: ԿԸՀ-ն հայտարարեց, որ նախնական տվյալներով ընդհանուր ընտրողների թիվը կազմել է 60,05 %:
19 փետրվարի 2013-ԵԱՀԿ ԽՎ-ն հրավիրվեց Հայաստանի Ազգային Ժողովի Նախագահի կողմից որպես դիտորդ մասնակցելու Հայաստանի նախագահական ընտրություններին. ԵԱՀԿ ԽՎ-ն որոշեց նշանակել ընտրությունների սահմանափակ դիտորդական առավելություն՝ ԽՎ-ի փոխնագահ Տոնինո Պիկուլայի (Խորվատիա) գլխավորությամբ:
ԵԱՀԿ ԽՎ-ն գնահատեց թե արդյոք կատարվել են 1990 թվականի Կոպենհագենի փաստաթղթով սահմանված ԵԱՀԿ պարտավորությունները:
ԵԱՀԿ ԽՎ-ն սկսեց իր դիտարկումնելը հիմնելով գրասենյակ Երևանում 2013 թվականի փետրվարի 6-ին, որին հաջորդեց նախընտրական այցը: Ընտրության օրը 30 դիտորդներ այցելեցին ավելի քան 100 ընտրատեղամասեր Երևանում, այլ քաղաքներում և գյուղերում՝Սևանում, Արմավիրում, Աշտարակում և Կոտայքում: ԵԱՀԿ ԽՎ-ն ցանկանում է շնորհակալություն հայտնել հայկական իշխանություններին և ժողովրդին նրանց հյուրընկալության և համագործակցության համար:
Հավելյալ տեղեկատվության համար խնդրում ենք կապվել՝

- Հաղորդակցության տնօրեն Նիլ Սայմընին. հեռախոս՝ +45 60108380, էլ փոստ՝ neil@oscepa.dk,
- Գլխավոր քարտուղարի տեղակալ Թինա Շոնին. հեռախոս՝ +45 40304985,
- www.oscepa.org